

# Թափոնների կառավարում



## Ներածություն

### Ի՞նչ է թափոնը:

Ամեն տարի ութ միլիոն տոննա պլաստիկ թափոն է հայտնվում ծովում: Որպեսզի պատկերացնենք՝ կապույտ կետը կշռում է 120 տոննա = 44,000 կապույտ կետ:

Թափոնների առաջացման գնահատումը և դրանց բաղադրության վերաբերյալ տեղեկությունը շատ կարևոր են թափոնների կառավարման համար, քանի որ այդ տեղեկությունն ազդում է թափոնների հավաքման և մշակման օբյեկտների նախագծման, կառավարման և անվտանգ հեռացման վրա: Տեղեկատվությունը նաև բարձրացնում է իրազեկվածությունը տանը առաջացող թափոնների և այն մասին, թե մարդիկ ինչ կարող են անել՝ նվազագույնի հասցնելու թափոնները և կիրառելու այնպիսի գործելակերպ, ինչպիսիք են թափոնների տարանջատումն ու վերօգտագործումը՝ աջակցելու իրենց քաղաքներում թափոնների կառավարման համակարգերին:

### Ի՞նչ է հարցումը:

Հարցումը էլեկտրոնային փոստով, հեռախոսով կամ անձամբ անհատների որոշակի խմբից տեղեկություն հավաքելու մեթոդ է, որն ընդհանուր առմամբ ներկայացնում է հարցմանը մասնակցած բնակչության մի մասը: Այսպիսով հավաքագրված տեղեկությունը սովորաբար կոչվում է տվյալների բազա:


Հարցումներն օգտագործվում են տարբեր մարդկանց կողմից տարբեր ոլորտների վերաբերյալ տեղեկություն հավաքելու համար: Հարցումները կարող են իրականացվել երկու եղանակով՝ կամ որպես կառուցվածքային հարցազրույց, որի ընթացքում հարցվողներին ուղղակիորեն հարցեր են տրվում, կամ որպես հարցաշար, որը մասնակիցը լրացնում է ինքնուրույն: Այս մեթոդաբանություններից յուրաքանչյուրն ունի իր առավելությունները, ինչպես նաև սահմանափակումները: Հարցաթերթիկը, օրինակ, արագ արդյունքներ է տալիս, նաև մատչելի է, սակայն այն սահմանափակված է պատասխանողի ըմբռնմամբ: Նրանք կարող են հարցերը չհասկանալ և թողնել անպատասխան: Հարցումների անցկացումը մանկավարժական գործիք է՝ աջակերտներին զգաստացնելու թափոնների խնդրի վերաբերյալ, բարձրացնելու նրանց ընկալումը, խրախուսելու նրանց գտնել խնդրի լուծման ռազմավարություններ և թափոնների կառավարման փորձը փոխանցել դպրոցում թափոնների կառավարման պրակտիկա կամ համակարգ ստեղծելու միջոցով:

Դպրոցում թափոնների վերաբերյալ հետազոտությունները կօգնեն գնահատել դպրոցում արտադրված/առաջացած թափոնների տեսակը և քանակը: Դա կօգնի հասկանալ հավաքագրման և հեռացման ներկայիս համակարգը: Հարցումը կօգնի պլանավորել համապատասխան գործողություններ: Թափոնների վերաբերյալ հետազոտությունը համայնքի մակարդակով կօգնի ուսանողներին հասկանալ թափոնների կառավարման համակարգերը, տեղական ինքնակառավարման մարմինների դերը ցանկացած քաղաքի/համայնքի թափոնների կառավարման գործում, և ինչպես կարող են քաղաքացիները աջակցել համակարգերի սահուն և արդյունավետ աշխատանքին: Այս տեղեկությունը հավաքելու տարբեր միջոցներ կան: Դրանք ներառում են գնահատումներ՝ չափելով առաջացած թափոնների տարբեր ծավալները, հարցաթերթիկներ կամ հետազոտություններ անցկացնելու այլ միջոցներ:

**Ի՞նչ է «տվյալը» և ինչո՞ւմ է կայանում տվյալների ներկայացման անհրաժեշտությունը:**

Տվյալները փաստերի հավաքածու են, դրանք են՝ թվերը, բառերը, չափումները, դիտարկումները կամ նույնիսկ իրերի պարզապես նկարագրությունները: Տվյալների ներկայացումը կարող է իրականացվել տարբեր մեթոդների կիրառմամբ. հաշվարկային նշանները, գրաֆիկները և գծապատկերները մեթոդներից մի քանիսն են, որոնք օգտակար կլինեն աշակերտների համար: Տարբեր տեսակի գծապատկերներ կարող են օգտագործվել տարաբնույթ իրավիճակներում և վիզուալիզացիայի ու համեմատության շնորհիվ հեշտացնել ընկալումն ու որոշումների կայացումը:

**Թափոնների կառավարումը ներկայացնող գծապատկեր՝ ըստ կգ-ների**



**Պլաստիկ թափոններ՝ փաստեր և թվեր**

**Որքան պլաստիկ է հայտնվում օվկիանոսում ամեն տարի**

			
<b>1096</b>	<b>24</b>	<b>44,444</b>	<b>30,180</b>
Էլֆեյան աշտարակ	Էմփայր Սթեյթ Բիլդինգ	Կապույտ կետեր	Պատմության մեջ ամենածանր սումո ըմբիշը՝ Յամամոտայամա Ռյուտը

Աղբյուր՝ Միջազգային բնապահպանական տեխնոլոգիական կենտրոն (Օսակա, Ճապոնիա):